


«Հաստատված է»

Հայաստանի բանկերի միության խորհրդի
2015թ. դեկտեմբերի 03-ի որոշմամբ,
արձանագրություն 07/2015

Բաղկացած է « 6 » թերթից

Տպագրված է « 4 » օրինակ


Հայաստանի բանկերի միության
Նախագահ



Ս.Ճգմաչյան

« 21 » հունվար

2016թ.



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԲԻՏՐԱԺ» ՀԻՄՆԱՐԿԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
/Նոր խմբագրությամբ/

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1.1. «Հայաստանի բանկերի միության /այսուհետ՝ ՀԲՄ/ ֆինանսական արբիտրաժ» հիմնարկը /այսուհետ նաև՝ ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարան/, ՀԲՄ կողմից ստեղծված, մշտապես գործող արբիտրաժային դատարան է՝ հիմնարկի կարգավիճակով:

1.2. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանն իր գործունեությունն իրականացնում է «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության այլ օրենքների և իրավական ակտերի, սույն կանոնադրության, ՀԲՄ խորհրդի կողմից հաստատվող կանոնակարգերի հիման վրա:

1.3. «Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժ» հիմնարկը իրավաբանական անձ չէ:

1.4. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի անվանումն է՝

- հայերեն լրիվ՝ «Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժ» հիմնարկ,
- հայերեն կրճատ՝ «ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարան»,
- ռուսերեն լրիվ՝ Финансовый арбитраж Союза банков Армении
- ռուսերեն կրճատ՝ Финансовый арбитражный суд СБА
- անգլերեն լրիվ՝ Financial Arbitrage of Union of Banks of Armenia
- անգլերեն կրճատ՝ Financial Arbitration Court of UBA

1.5. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանն ունի իր հայերեն անվանմամբ կլոր կնիք: ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանը կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

1.6. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի գտնվելու վայրն է՝ ք.Երևան, Կորյունի փող. 19 Ա, 6-րդ հարկ:

1.7. «Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժ» հիմնարկը ստեղծված է համարվում ՀԲՄ խորհրդի կողմից սույն կանոնադրության հաստատման պահից և ենթակա է հաշվառման օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. ՀԲՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԲԻՏՐԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

2.1. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի իրավասությանը ենթակա են առևտրային հարաբերություններից բխող այն վեճերը, որոնց լուծումը կողմերը վերապահել են ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանին /«Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժ» հիմնարկին/՝ այդ մասին կնքելով արբիտրաժային համաձայնություն:

2.2. Կողմերի արբիտրաժային համաձայնության առկայության դեպքում ՀԲՄ Ֆինանսական արբիտրաժային դատարանն ղիմելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ներառյալ՝ անհատ ձեռնարկատերերը, իրավաբանական անձիք, օտարերկրյա քաղաքացիները /քաղաքացիություն չունեցող անձինք/ և իրավաբանական անձինք:

3. ՀԲՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ

3.1. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի գործունեությունը հիմնվում է օրինականության, արբիտրաժային տրիբունալի անկախության, օրենքի և արբիտրաժային տրիբունալի առջև քաղաքացիների, իրավաբանական անձանց հավասարության, կողմերի մրցակցության և իրավահավասարության, վեճերի օբյեկտիվ, բազմակողմանի, անկողմնակալ, արագ և պրոֆեսիոնալ/մասնագիտական/ քննության սկզբունքների վրա:

4. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԲԻՏՐԱԺ» ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ԴՐԱ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. «Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժ» հիմնարկը Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության կողմից կնքված և վավերացված միջազգային պայմանագրերով /համաձայնագրերով/, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված խնդիրների լուծման և հիմնարկի բնականոն գործունեությունը ապահովելու համար տիրապետում, օգտագործում և տնօրինում է իրեն ամրակցված գույքը՝ ըստ այդ գույքի նշանակության, այդ թվում ֆինանսական միջոցները:

4.2. «Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի ֆինանսական միջոցներն ու գույքը օգտագործվում և տնօրինվում են ՀԲՄ գործադիր մարմնի ղեկավարի կողմից՝ ՀԲՄ խորհրդի կողմից հաստատված ծախսերի նախահաշվի շրջանակներում:

4.3. «Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի գույքը ձևավորվում է ՀԲՄ-ի կողմից վերջինիս կանոնադրությամբ սահմանված կարգով հիմնարկին ամրակցված գույքից և գումարներից, արբիտրաժային վճարներից, հիմնարկին հատկացվող այլ գումարներից, ինչպես նաև օրենսդրությամբ չարգելված այլ եղանակներով ձեռք բերվող միջոցներից:

4.4. Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի գործունեությունից առաջացած դրամական միջոցներն առաջնահերթության կարգով ուղղվում են ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի անխափան գործունեությունն ապահովելուն:

5. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԲԻՏՐԱԺ» ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

5.1.1. «Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի կառուցվածքն ու հաստիքացուցակը /ՀԲՄ հաստիքացուցակի հետ համատեղ/ հաստատում է ՀԲՄ խորհուրդը:

5.1.2. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի բնականոն գործունեությունն ապահովվում է «Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի միջոցով, որի ղերակավարումն իրականացնում է հիմնարկի ղեկավարը:

6. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԲԻՏՐԱԺ» ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

6.1. «Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի ընդհանուր կառավարումը, որպես հիմնադիր, իրականացնում է ՀԲՄ-ն՝ օրենքներով, իր և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

6.2. «Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի կառավարմանը վերաբերող բոլոր իրավասությունները ՀԲՄ անունից իրականացնում են ՀԲՄ խորհուրդը կամ ՀԲՄ գործադիր մարմնի ղեկավարը՝ համաձայն ՀԲՄ-ի և սույն կանոնադրությունների, ներքին ընթացակարգերի:

6.3. ՀԲՄ խորհրդի իրավասության հարցերն են.

6.3.1. «Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի կանոնադրության, կանոնակարգի, ներքին ընթացակարգերի հաստատումը, դրանցում փոփոխությունների և լրացումների կատարումը, ինչպես նաև դրանց նոր խմբագրությամբ հաստատելը.

6.3.2. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի արբիտրների կազմի՝ անվանացուցակի հաստատումը, դրանում փոփոխություններ կատարելը, արբիտրների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

6.3.3. ՀԲՄ գործադիր մարմնի ղեկավարի ներկայացմամբ՝ ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային հիմնարկի վարչակազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատումը.

6.3.4. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի գործունեության դադարեցումը.

6.3.5. ՀԲՄ գործադիր մարմնի ղեկավարի ներկայացմամբ «Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի ծախսերի նախահաշվի, ինչպես նաև դրա կատարողականի հաստատումը:

6.3.6. «Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի գործունեության հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ ՀԲՄ խորհրդին վերապահված այլ լիազորությունների իրականացումը:

6.3.7. ՀԲՄ խորհրդի մի շարք իրավասություններ կարող են լիազորվել ՀԲՄ գործադիր մարմնի ղեկավարին:

6.4. ՀԲՄ գործադիր մարմնի ղեկավարի իրավասության հարցերն են.

6.4.1. ՀԲՄ գործադիր մարմնի ղեկավարը ՀԲՄ նախագահն է, եթե վերջինս ընտրվել է ՀԲՄ ընդհանուր ժողովի կողմից և գործադիր տնօրենը, եթե ՀԲՄ նախագահն ընտրվել է ՀԲՄ խորհրդի կողմից.

6.4.2. ՀԲՄ գործադիր մարմնի ղեկավարը որոշում է «Հայաստանի բանկերի միության Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկին ամրակցվող գույքի կազմը և չափը, հաստատում է «Հայաստանի բանկերի միության Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի ֆինանսական հաշվետվությունները, իրականացնում հիմնարկի ֆինանսական միջոցների կառավարումը, ՀԲՄ խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հիմնարկի ծախսերի նախահաշիվն ու դրա կատարողականները.

6.4.3. Աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է «Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի աշխատողներին:

6.4.4. Կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ՝ «Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի աշխատողների նկատմամբ:

6.4.5. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և ՀԲՄ ֆինանսական արբիտրաժի կանոնակարգով ու ներքին ընթացակարգերով, ՀԲՄ գործադիր մարմնի ղեկավարին վերապահված և կամ ՀԲՄ խորհրդի կողմից պատվիրակված այլ լիազորությունների իրականացումը:

7. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԲԻՏՐԱՅ» ՀԻՄՆԱՐԿԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1. «Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի ղեկավարն ի պաշտոնե արբիտր չի հանդիսանում: Հիմնարկի ղեկավարը՝.

7.1.1. Ղեկավարում և կառավարում է Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի ընթացիկ գործունեությունը, բացառությամբ այն հարցերի, որոնք Օրենքով և սույն կանոնադրությամբ վերապահված են ՀԲՄ-ի իրավասությանը.

7.1.2. Կատարում է աշխատանքի բաժանում հիմնարկի աշխատողների միջև.

7.1.3. Մասնակցում է արբիտրաժային գործունեությանն առնչվող օրենսդրական փոփոխությունների նախագծերի քննարկումներին:

7.1.4. Վերահսկողություն է իրականացնում արբիտրների կողմից ՀԲՄ Ֆինանսական արբիտրաժային դատարանի կանոնակարգով սահմանված ժամկետների պահպանման նկատմամբ:

7.1.5. Կազմակերպում է արբիտրաժային դատավարության պրակտիկայի ուսումնասիրումը և ամփոփումը, ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանում քննված գործերի վիճակագրության վարումը.

7.1.6. Իրականացնում է սույն կանոնադրությունից և ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի կանոնակարգից և ներքին ընթացակարգերից բխող այլ լիազորություններ:

7.2. «Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի ղեկավարն օրենքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում իր հակաօրինական գործունեության արդյունքում ՀԲՄ-ին և ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանին պատճառված գույքային վնասի համար: «Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի ղեկավարի լիզորությունների դադարեցումը չի կարող հիմք հանդիսանալ պատճառված նյութական վնասները հատուցելու պարտավորությունները չկատարելու համար:

8. ՀԲՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՐԲԻՏՐՆԵՐԸ

8.1. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի արբիտրներ կարող են լինել բարձրագույն իրավաբանական կրթություն /մագիստրոսի կոչում/, ֆինանսաբանկային համակարգի առնվազն երեք տարվա ընդհանուր աշխատանքային կամ իրավաբանական խորհրդատվության փորձ և դատաիրավական գործունեության փաստացի փորձ ունեցող անձինք:

8.2. ՀԲՄ Ֆինանսական արբիտրաժային դատարանի արբիտրը չի կարող միաժամանակ հանդիսանալ այլ արբիտրաժային դատարանի արբիտր:

8.3. ՀԲՄ խորհուրդը կարող է սահմանել ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի արբիտրների ընտրության այլ չափանիշներ և ընթացակարգեր:

9. ՀԲՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

9.1. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի գործունեությունը դադարում է օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

9.2. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի գործունեությունը համարվում է դադարած՝ այդ մասին ՀԲՄ խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու պահից: